

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 132

**Քահանայ** – Մի քահանայ մէկն է որ վարում է ժողովրդի կողմից Աստուծոյ առջեւ: Ուր մի մարգարէ Աստուծոց կարգաւ եր լինելու Իր ներկայացուցիչը մարդկանց հետ, սակայն մի քահանայ Աստուծոց կարգաւ եր լինելու մարդու ներկայացուցիչը Աստուծոյ առջեւ: Հին Կտակարանում բառը որը գրեթէ առանց բացատրութեան գործածուել է քահանայի համար «քոհեն» բառն է: Անկումից յետոյ ընկած մարդը սուրբ Աստուծոյ ներկայութեան մուտքից արգելու էր: Ուստի նա պէտք ունէր մէկին որը վարէր իր համար (իր կողմից), ներկայացնելով իրեն Աստուծոյ առջեւ, միջնորդելով Աստուծոյ եւ իր միջեւ, եւ բարեխօսելով իր համար: Աստուած հայթայթեց այդ հաստատելով քահանայական պաշտօնը:

Անկումից յետոյ՝ մարդկութեան պատմութեան նախնական ժամանակաշրջանում, թուում է թէ իւրաքանչիւր ընտանիքի գլուխը ծառայեց որպէս մի քահանայ՝ ներկայացնելով իրենց ընտանիքը եւ միջնորդելով նրանց եւ Աստուծոյ միջեւ (Յոր 1:5): Յետագայում Աստուած հաստատեց քահանայութեան կարգը՝ որը սահմանափակուած էր Ղեւտացիների ցեղին՝ սկսած Ահարօնից եւ իր որդիներից (Ելից 28:1, 29:29-30): Եւ այդ Ղեւտական քահանայութիւնը շարունակեց Հին Կտակարանի ընթացքում եւ մինչեւ Քրիստոսի ժամանակը: Կան Սուրբ Գրքում բազմաթիւ հատուածներ որոնք ներկայացնում են քահանայութեան պարտականութիւնները, բայց դրանցից ամենալաւ ամփոփումը գտնուում է Եբրայեցիս 5:1-4ում:

**Քրիստոս որպէս քահանայ** – Հին Կտակարանը նախագուշակեց մի մեծ քահանայի գալուստը: Մաղմոս 110:4ում Հայր Աստուածը ասում է Դաւիթի Տիրոջին՝ Մեսիային, թէ՛ «Տէրը երդում արաւ եւ չի զղջալ. Դու քահանայ ես յաւիտեան Մելքիսեդեկի կարգին պէս»: Նաեւ Զաքարիա ճում, Աստուած յայտարարեց «Շառաւիղ» անունով մի մարդու գալուստը՝ որն պիտի շինէր Տիրոջ տաճարը եւ լինելու էր մի քահանայ (համարներ 12-13): Մրանք նշանակաւոր Մեսիական մարգարէութիւններ են՝ որոնց Յիսուս Քրիստոսը իրականացրեց Իր մարդեղութեամբ ու ծառայութեամբ (Եբրայեցիս 5: 5-6):

Եբրայեցիս գրքի հեղինակը ներկայացնում է հարուստ տեղեկութիւններ Մեծ Քահանայապետի գործի նկատմամբ, համեմատելով եւ հակադրելով դրանց Ղեւտական քահանաների հետ: Ուրիշ քահանաների նման Յիսուսը մի մարդ էր, եւ նշանակուած էր Աստուծոց (Եբրայեցիս 2:17, 5:5-6): Յիսուսը մի միջնորդ էր մեղաւոր մարդու եւ սուրբ Աստուծոյ միջեւ (համարներ 9:15, 12:24): Նա Աստուծուն պատարագ մատուցանեց Իր ժողովրդի մեղքերի քաւութեան համար (համարներ 7:26, 9:15, 26-28, 10:12-13): Իր վրայ առնելով մի մարդկային բնութիւն, Յիսուսը ընդունակ դարձաւ անձնականօրէն զգալու մարդկային պայքարումները, փորձութիւնները, ցաւ ու տառապանքները. եւ ուստի դարձաւ մի ողորմած Քահանայապետ, կարող համակրելու մեզ հետ մեր տառապանքների մէջ (համարներ 2:17-18, 4:15, 5:8): Ուստի Նա կատարեց քահանայական պաշտօնի բոլոր գործունէութիւնները:

Սակայն, անման Իրենից առաջ եկած քահանաներին, Յիսուսը պէտք չունէր մատուցանելու պատարագներ Իր համար, քանի որ Նա ամեն բանով անմեղ եւ սուրբ էր (Եբրայեցիս 4:15, 7:26-27): Նա պէտք չունէր մատուցանելու բազմաթիւ եւ կրկնելի զոհեր, քանի որ Նա մատուցանեց մէկ զոհ եւ մէկ անգամ (համարներ 7:27, 9:25-18): Նաեւ Իր զոհը անասունների պատարագը չէր՝ որը բնականօրէն չէր կարող մեղքեր վեր առնել, այլ հենց Ինքն էր՝ իսկ զոհը որն ամենաբարարարն էր մեղքեր վեր առնելու (համարներ 7:27, 9:12-14, 10:5-14): Այս կատարելով Յիսուսը նստեց Աստուծոյ աջ կողմը լրացնելով Իր զոհաբերական գործը (համարներ 10:11-12): Նաեւ անման բոլոր քահանաներին, Յիսուսն է միակ իսկական քահանան, եւ Իր քահանայութիւնը մնայուն եւ անփոփոխական է (համարներ 7:23-24):

Մի ուրիշ կարեւոր տարբերութիւն այն է որ անման Ղեւտական քահանաներին, Յիսուսը եկել էր Մելքիսեդեկի կարգից (Եբրայեցիս 5:6, 6:20, 7:11), որը Ղեւտացիներիցը չէր (համար 7:3), եւ որին կարդում ենք որ Աբրահամը տասանորդ տուաւ, նշանակելով Մելքիսեդեկի գերազանցութիւնը նոյնիսկ նահապետից (Ծննդոց 14:18-20, Եբրայեցիս 7:4-7): Ուրեմն, Եբրայեցիս գրքի հեղինակը բացատրում է Յիսուսի քահանայութեան գերազանցութիւնը Ղեւտացիներից՝ որի քահանայութիւնը հիմնուած չի Մովսէսական օրէնքից, այլ աստուածային երդումից (համարներ 7:16, 20-21), եւ որի ծագումը Ղեւտացիների ցեղիցը չի այլ Յուդայի (համարներ 7:13-15), եւ որի քահանայութիւնը յաւիտեանական է (համար 7:16). եւ ուստի Նա մի նոր եւ աւելի գերազանց ուխտի միջնորդն է (համարներ 7:18-19, 22, 8:6-7, 9:15), որն լինելով հաւատարիմ Աստուծուն՝ որը կոչեց Նրան, բոլորովին եւ կատարելապէս լրացրեց փրկանաւորութեան գործը (համարներ 3:1-2, 5:8-9, 9:12):

Այսպիսով Քրիստոսը Իր ժողովրդի համար բացեց ճանապարհը Աստուծոյ ներկայութեան մէջ, մի մեծ մենաշնորհում եւ պատիւ որ մենք վայելում ենք քան թէ Հին Ուխտի տակ եղած հաւատացեալները (Եբրայեցիս 9:1-7): Հիմա այլեւս չկայ մի երկրային տաճար եւ քահանայութիւն արգելելու (ընդմիջելու) մեր մուտքը Աստուծուն (Մատթէոս 27:51): Ուստի Եբրայեցիս գրքի հեղինակը յորդորում է հաւատացեալներին որ համարձակութիւնով «Սրբարանը մտնել Յիսուսի արիւնովը» (Եբրայեցիս 10:19-23):